**Արձանագրություն N 4**

**ԱՔ-ԳՀԾՁԲ-26/31 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Արմավիր 05 հունիսի 2026թ.

ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Լիանա Հայրապետյան |
| Հանձնաժողովի Գնահատող անդամներ՝ | Հովհաննես Առաքելյան, Սյուզաննա Իսախանյան |
| Բացող անդամներ՝ | Իրինա Գալստյան, Օքսաննա Պետրոսյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Սադաֆ Զորաբյան |

## 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

**(Լիանա Հայրապետյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Բանակցությունների կազմակերպման մասին,
3. Գնահատման մասին,
4. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին,
5. Ներկայացված հիմնավորումների մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0***

## 2. Բանակցությունների կազմակերպման մասին

**(Լիանա Հայրապետյան)**

**Քանի որ 1-ին և 3-րդ չափաբաժինների համար առաջարկված նվազագույն գները հավասար էին, ուստի հանձնաժողովը որոշել էր.**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի բ. պարբերության համաձայն հաղթողին որոշելու նպատակով կասեցնել նիստը և առաջարկված գնի նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված նվազագույն գին ներկայացրած մասնակիցների հետ բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել ս.թ. հունիսի 05-ին ժամը 16:00-ին, յուրաքանչյուր չափաբաժնի բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 5 րոպե:

Սահմանված ժամկետում բանակցություններին «Վանտեխ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ:

Մասնակիցների կողմից առաջարկած պայմանագրի կատարման գները հետևյալն են.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Գինն առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր | Նախահաշվային գին |
| 1 | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Լերմոնտով փողոցի հիմնանորոգման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայություն | | | | 4450613 |
| | «Վանտեխ» ՍՊԸ | 1099000 | | 1099000 | |
| | «Վերտիկալ» ՍՊԸ | 1100000 | 220000 | 1320000 | |
| | «Սուար» ՍՊԸ | 2000000 | | 2000000 | |
| | «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ | 3000000 | | 3000000 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ | 3000500 | | 3000500 | |
| 2 | **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Թումանյան փողոցի Սայաթ-Նովա-Ս. Շահումյան հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայություն** | | | | **1947282** |
| | «Վանտեխ» ՍՊԸ | 505000 | | 505000 | |
| | «Վերտիկալ» ՍՊԸ | 575000 | 115000 | 690000 | |
| | «Սուար» ՍՊԸ | 1000000 | | 1000000 | |
| | «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ | 1200000 | | 1200000 | |
| 3 | **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Տիգրան Պետրոսյան փողոցի Հանրապետություն-Գորկի հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայություն** | | | | **3405298** |
| | «Վանտեխ» ՍՊԸ | 899000 | | 899000 | |
| | «Վերտիկալ» ՍՊԸ | 900000 | 180000 | 1080000 | |
| | «Սուար» ՍՊԸ | 1700000 | | 1700000 | |
| | «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ | 2000000 | | 2000000 | |
| | «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ | 2700000 | | 2700000 | |
| 4 | **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի Հունան Ավետիսյան փողոցի 1-ին փողոցից Հ. Ավետիսյան 2-րդ նրբանցք ընկած հատվածի և Հունան Ավետիսյան 1-ին նրբանցքի հիմնանորոգման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայություն** | | | | **1008400** |
| | «Վերտիկալ» ՍՊԸ | 335000 | 67000 | 402000 | |
| | «Վանտեխ» ՍՊԸ | 388000 | | 388000 | |
| | «Սուար» ՍՊԸ | 600000 | | 600000 | |

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

## <u>3.Գնահատման մասին</u>

**(Լիանա Հայրապետյան)**

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտերի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

| Հ/Հ | Մասնակիցը | Չափաբաժինը |
|---|---|---|
| | ***Ընտրված մասնակից ճանաչել՝*** | |
| 1 | «Վանտեխ» ՍՊԸ | 1, 2, 3 |
| 2 | «Վերտիկալ» ՍՊԸ | 4 |
| | ***երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել*** | |
| 1 | «Վերտիկալ» ՍՊԸ | 1, 2, 3 |
| 2 | «Վանտեխ» ՍՊԸ | 4 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:***

## 4.Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին

(Լիանա Հայրապետյան)

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

## 5.Ներկայացված հիմնավորումների մասին

(Լիանա Հայրապետյան )

Էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ **հիմնավորումներ չեն ներկայացվել:**

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ Լիանա Հայրապետյան

անդամներ՝ Հովհաննես Առաքելյան

Սյուզաննա Իսախանյան

Իրինա Գալստյան

Օքսաննա Պետրոսյան

Քարտուղար՝ Սադաֆ Զորաբյան